

**Վերապատրաստումներ հանրակրթական ուսումնական հաստատության  
ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու համար /«Հայ-Ռուսական  
Սլավոնական համալսարան»/**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված  
հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք  
/հավաստագիր/ ստանալու համար դիմող անձանց վերապատրաստում  
իրականացնող Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանը հայտարարում է  
վերապատրաստումներ այն անձանց համար, ովքեր ցանկանում են ստանալ ՀՀ  
հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք:

Վերապատրաստման դասընթացներին կարող է մասնակցել այն անձը, որն ունի  
բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական,  
գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի  
առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Վերապատրաստմանը մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

- 1) դիմում՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ռեկտորի անունով (ծև 1,  
լրացվում է տեղում)։
- 2) 3x4 չափի 2 լուսանկար։
- 3) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը 2 օրինակ։
- 4) աշխատանքային գրքույկի պատճենը կամ քաղվածքը 2 օրինակ։
- 5) անձնագրի պատճենը 2 օրինակ։
- 6) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ  
փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց  
ցանկը) 2 օրինակ։
- 7) «Առեքսիմբանկ» ՓԲԸ-ում Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի  
238001282207-00 հաշվեհամարին փոխանցված գումարի անդորրագիրը:

Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակի հետ միասին: Պատճենների  
իսկությունը որոշելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Դասընթացի տևողությունը 15 օր է՝ 110 ժամյա տևողությամբ: Վերապատրաստման  
դասընթացի արժեքը 60.000 ՀՀ դրամ է՝ առանց ճաշի և սուրճի ընդմիջման:

Դիմումներն ընդունվում են ս.թ. հունվարի 11-ից 31-ը:

Դասընթացները սկսվելու են փետրվարի 6-ից և ավարտվելու են փետրվարի 24-ին  
(բացի շաբաթ և կիրակի օրերը): Յուրաքանչյուր օր դասընթացները սկսվելու են  
ժամը 14<sup>30</sup>-ից:

Երևան, Հովսեփ Էմինի 123, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, 2-րդ  
հարկ, 216 սենյակ, ամեն օր՝ ժամը 10<sup>00</sup>-ից 17-ն (բացի շաբաթ և կիրակի օրերը):  
Հարցերի դեպքում զանգահարել՝ 010-26-97-01, կամ գրել հետևյալ էլ. փոստով՝  
avetaida@mail.ru.